Մարգան

891·715
Մ-38

Ս. ՄԱՐՇԱԿ

Կց-8
13.

# ՄԻՍՏՐ ՏՎԻՍՏՐ



320/264

ՊԵՏՀՐԱՏ
1935
ԵՐԵՎԱՆ

Н арм. 1-287а
891.71V
М-38
6 NOV 2011

Ս. ՄԱՐՇԱԿ

# ՄԻՍՏՐ ՏՎԻՍՏՐ

Շապիկն ու նկարները՝
Վ. ԼԵԲԵԴԵՎԻ

Փոխադրեց՝ Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



5718
Гос. Публичная Б-ка в Ленинграде

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1935

02 JUN 2013
4167
Ա-2872

Խմբագիր՝ Ա. Հայրյան,
Տեխ. խմբ. Տ. Խաչվանքյան
Սրբագր. Հ. Հայրապետյան
Գլավլիտ № 49, Պատ. № 676
Տիրաժ 5000. Յ ե ր և վ ա ն,
Պ ե տ հ ր ա տ ի տ պ ա ր ա ն

112-87

Գալով մի յերկիր, թյուրիմացությունից խուսափելու համար, աշխատեցեք պահպանել այդ յերկրի օրենքներն ու սովորությունները:

(Կարլ Բեդեկերի հին ուղեցույցից)

1

Նյու-Յորքի,
Հսկա
Քաղաքի
Մի փողոցում
Բանուկ,
Ապրում է
Մի մարդ,
Անունը՝ Կուկ:
Կուկն ուներ
Գրասենյակ:
Յեթե ունեք
Ազատ ժամանակ,
Ուզում եք դուք
Աշխարհ դուրս գալ;
Փարիզ, Պամիր,
Բուդապեշտ,
Գնալ, տեսնել
Ազատ, հեշտ,
Կուկն իսկույն
Շոգենավում
Կպատրաստի
Մի լավ սենյակ,








Ուղտ կուղարկի
Նա ձեզ համար,
Կամ կապի,
Վոր տան
Սալոնանակ:



Հյուրանոցում
Կտա համար
Լողարանով,
Տատրվանով,
Նախաճաշով,
Այգիներով
Մեծ ու հարմար:




Արմավենի,
Ցեղենի,
Հարավն ու
Արևմուտքը,
Ցույց կտա ձեզ
Միստր Կուկը:

2

Միստր
Տվիստրը,
Նախկին
Մինիստրը,
Վորն ունի բանկ,
Թերթեր,
Շոգենավեր,
Գործարաններ,




Վճռեց գնալ,
Իր կնոջ և
Աղջկա հետ,
Աշխարհ տեսնել:




3

Ատլանտյան
Զարթնեց Կուկը,
Հեռախոսը
Բացեց տուտը.
— Շոգենավում
Նյու-Յորք— Լենինգրադ,
Պատրաստեցեք
Չորս մեծ
Սենյակ,
Ճաշարանով,
Լողարանով,
Այգիներով,
Տատրվանով:
Միայն նայեք,
Վոր չլինեն
Դրացի—
Նեգր, հնդիկ,
Չինացի:
Շոգենավում
Չտեսնեմ դրանց.
Յես չեմ սիրում
Գունավոր մարդկանց:





Կուկն իսկույն, թե՝
— Լսում եմ յես ձեզ:
Ամեն ինչ կանեմ
Ձեր ուզածի պես:
Ցտեսությո՛ւն,
Ձերդ մեծություն:

4

Մեկնելուց
Ուղիղ
Տասը րոպե
Առաջ,

Միստր
Տվիստրը
Նախկին
Մինիստրը
Առոք,
Փառոք,
Կողքին աղջիկ,
Ձեռքին կապիկ,
Մի պառավ կին,
Ակնոցն աչքին,
Չորս ծառաներ—





Հսկա ու մեծ—
Պայուսակով
Քսան ու վեց,
Շոգենավը
Բարեհաճեց:








QUEBECK
Boston
RIO DE
JANEIRO


PHILA ELPHIA



5

Լող է տալիս
Շոգենավը
Ջրի վրա
Մութ,
Ալեքոտ,

Միստր
Տվիստրին,
Նախկին
Մինիստրին
Ամերիկայից
Բերում
Մեզ մոտ:
Միստր
Տվիստրը,
Վոր ունի
Բանկ,
Թերթեր,
Գործարաններ
Մեծաքանակ,
Շոգենավով



Խաղում է
Գնդակ:



Ուրախ է նա,
Վոր չունի
Դրացի—
Նեգր, Հնդիկ,
Չինացի:

Իր հետ նրանք
Չեն նստի բնավ.
Նրանց տանում է
Ուրիշ շոգենավ:
Այնտեղ միշտ էլ
Թաց է և ծուխ,
Ու չորս կողմը
Պատած սև մուխ:





Միստր
Տվիստրը,
Նավակին
Մինիստրը,
Միլիոներ,
Ահա հասնում է,
Վորպես տուրիստ,
Ես Ես Ես Ել։



Աղմուակ է լողում
Լենինգրադի
Նավահանգստից,
Ահա քաղաքը
Մեծ շոգենավի,
Ջրի աջ կողմից։
Մոխրագույն
Ջրեր,
Վերամբարձ
Տներ։



Գլխարկը բռնած
Նա իր աջ ձեռքով,
Արագ իջնում է
Նեղլիկ կամրջով։

Նայելով
Պետրոպավլովսկի
Սրածայր ձողին,
Նրանք բռնեցին
Հյուրանոցի ուղին։



Տեղավորեցին
Պայուսակ և իր,
Արագ նստեցին
Ավտոմոբիլ։

Երկար ու ձիգ
Սուլոցով,
Արագ անցան
Փողոցով։



7

Միստր
Տվիստրը,
Նախկին
Մինիստր,
Միստր
Տվիստրը
Միլլիոներ,
Որ ունի շատ
Գործարաններ,
Թերթեր,
Շոգենավեր,
Ներս է մտնում
Խորհրդային
Հյուրանոցը
«Անգլետեր»:

Մի թանկագին
Սիգար բերնին,
Ասում է նա
Դռնապանին.



— Մեզ մի քանի
Համար տվեք.
Հեռագիր ենք
Տվել յերեկ:

— Կտա՛նք, կտա՛նք
Յերկու սենյակ
Փառավոր,—
Պատասխանեց
Դռնապանը
Բեխավոր:—
Համարներն են
Հինգ ու վեց,
Լուսավոր են
Ու մեծ-մեծ:

8

Գորգեր փռված
Միջանցքով,
Հայելիների
Կողքով,
Գնում են
Դեպի համարը
Բարձրահասակ
Դռնապանը
Սյուրտուկով,
Հետո յեկվորը
Լայն պանամա
Գլխարկով,





Մի պառավ կին
Ակնոցն աչքին
Յեվ մի աղջիկ՝
Ձեռքին կապիկ։

Մեկ ել հանկարծ
Յեկվորները
Լայն բացեցին
Բերանները։

Միստր
Տվիստրը
Ապշած նայեց,
Վողջ մարմինը,
Քրտինք պատեց։





Վերևից,
Վաթսուներորդ
Համարից,
Գալիս էր
Գիտե՞ք ով.
Բարձր հասակով
Մի սեվամորթ,
Բերնին ծխամորճ:

Իջնում էր
Նա ցած,
Մե՛կ ձեռքը
Կամաց
Սանդուղքին քսում
Ցեվ հանդարտ
Ու լուրջ
Ծխամորճ ծխում:





Իսկ
Հայելիների
Կողքով,
Իրար յետևից,
Շարքով,
Անցնում էյին
Անթիվ նեգրեր
Սևամորթ,
Բերաններին
Մի-մի
Կարճ ծխամորճ:

Իջնում էյին ցած,
Ձեռքերը կամաց
Սանդուղքին քսում,
Ցեվ հանդարտ ու լու
Ծխամորճ ծխում:



Միստր
Տվիստրը
Նայեց
Դեպի ձախ,
Նայեց
Դեպի աջ,
Զայրացած
Ասաց.



— Յեթե այստեղ
Կա սևամորթ,
Մենք չենք կարող
Ապրել ձեզ մոտ:



Սլանում են
Դեպի ցած․
Սանդուղքով
Յեկվորը
Լայն պանամա
Գլխարկով,
Մի պառավ կին,
Ակնոցն աչքին
Յեվ մի աղջիկ,
Ձեռքին կապիկ:



Անխոս նստեցին
Ավտոյի միջին,
Ամուր խփեցին
Շոֆերի մեջքին:



Դռնապանը
Գլուխ տվեց
Տուրիստներին,
Ապա փակեց
Ու մոտեցավ
Հեռախոսին:



— Յերկու
Քառասուն յերկու
Քառասուն ութ,
«Աստո՞րիա»։
Այդ դո՞ւ յես
Կո՚նյա։
Ցերեկ հիմա
Մեքենայով
Ձեզ մոտ կգան
Յերեք տուրիստ—
Մարդ, կին ու աղջիկ—
Մի անտանելի,
Խայտառակ մարդիկ։
Վոր գան,
Դու ասա.
Բռնված են
Հիմա
Համարները վողջ։
Լսեցի՞ր, Կո՞նյա։
Դե՛, յեղիր առողջ։

— Քսան մեկ
Տասնութ,
«Միցֆ՞լիա»։
Այդ դո՞ւ յես
Ծիցիլիա։



Ցերեկ հիմա
Մեքենայով
Ձեզ մոտ կգան
Յերեք տուրիստ—
Մարդ, կին ու աղջիկ—
Մի անտանելի,
Խայտառակ մարդիկ։
Վոր գան,
Դու ասա.
Բռնված են
Հիմա
Համարները վողջ։
Լսեցի՞ր, Ցեցի՛լիա։
Դե՛, յեղիր առողջ։

— Հինգ
Յերեսուն հինգ
Յերեսուն ինը.
«Իտա՞լիա»,
Այդ դո՞ւ յես,
Վանյա՛։
Ցերեկ հիմա
Մեքենայով
Ձեզ մոտ կգան
Յերեք տուրիստ,
Անունը...
Սրան էլ նույնը։

Սլանալով
Արագ-արագ,
Ավտոն գնաց
Ու կանգ առավ.



Գոգոլի փողոց,
Յերրորդ համար:
— Վո՛չ,— ասում են,—
Չկա համար:

Պեստելի փողոց,
Առաջին համար:
— Վո՛չ,— ասում են,—
Չկա համար:

Ապստամբության
Հրապարակ
Հինգերորդ համար:
— Վո՛չ,— ասում են,—
Չկա համար:



Մեկ ել
Հանկարծ
Պայթեց շինը,
Շուտով
Կպրծնի բենզինը:



Միստր Տվիստերը,
Նախկին մինիստրը;
Միստր Տվիստերը
Միլիոներ,
Վոր ունի
Գործարաններ,
Թերթեր,
Շոգենավեր,
Վերադարձավ
Հյուրանոցը
«Անգլետեր»,
Հետը կինը
Աղջիկը,
Ձեռքին կապիկը:



Ուղիղ ժամին
Տասներկուսին,
Հյուրանոցի
Զանգը տվին:



Միջանցքն ահա
Լուսավորվեց,
Դռնապանը
Դուռը բացեց:

— Ու՛շ է, — ասաց
Դռնապանը, —
Զբաղված են
Համարները:
Ճնշված ազգերի
Համագումար է,
Բոլոր տեղերը
Նրանց համար են:



— Բա ի՞նչ անեմ,
Հայրիկ, հիմա.
Շատ եմ հոգնած, —
Աղջիկն ասաց: —
Թե քնելու
Տեղ չգտնենք,
Մի տուն գնենք:

— Հա՛, կգնես.
Չիկագոյում չես:



Մայր ու աղջիկ
Կլինեյին
Կաթվածահար,
Եթե նրանց
Դռնապանը
Գիշերելու
Միջոց չտար:

Նա կնոջը
Եվ աղջկան
Տեղեր տվեց
Պատվական՝
Իր մահճակալը
Պրոլետարական:

Իսկ
Միստրը
Միջանցքի
Աթոռին
Նստեց,
— Ո՛, Աստված, —
Գոչեց,
Եվ իսկույն
Քնեց:



Միստր Տվիստը
Նախկին մինիստրը
Միստր Տվիստը
Միլիոներ,

Հոգնած,
Դադրած՝
Քնեց շեմքին
Խորհրդային
Հյուրանոցի
«Անգլետեր»:



12

Քնած է նա
Ու ժպտում է
Յերազում,
Յեվ քնի մեջ
Տե՛ս, ինչ յերազ է
Տեսնում:

Տեսնում է նա՝
Անտուն,
Անտեր
Թափառում է
Փողոցում,
Հանկարծ վերից
Ոդանավի
Հռնդոց է
Նա լսում:
Ու վերևից
Մեկ էլ հանկարծ
Միստր Կուկն է
Իջնում ցած:





Վազում է նա
Արագ - արագ
Դեպի Կուկն
Իր ծանոթ,
Ուրախ թռչում
Ոդանավը,
Տեղավորվում
Նրա մոտ:



Ահա նրա
Հայրենիքը—
Ամերիկան
Հարազատ,
Ահա տները
Մարմարե,
Բազմահարկ ու
Ծառապատ:



Բացում է
Դուռը
Ծերունի
Ծառան.
— Ամերիկայում
Տեղ չկա,—
Ասում է
Նրան:

Փակվեցին
Ամուր
Հսկա
Դռները,
Տխմարը
Զարթնեց՝
Կրկին
«Անգլետերը»:



Առավոտյան վաղ,
Արևածագին,
Յեկավ մի պատանի
Խոզանակը ձեռքին:
Մաքրեց կոշիկներ
Կարմիր, դեղին,
Լայն ու նեղ,
Շվեդական,
Խորհրդային,
Գերմանական,
Ֆրանսիական:





Ուժ տվեց իր
Խոզանակին,
Մաքրեց կարգին,
Ժամանակին։

Հենց վոր սրբեց
Վերջին զույգը·
Տեղից յելավ
Մեր տուրիստը,
Ձեռքը տարավ
Դեպի ծոցը,
Վոր հանի իր
Ծխախոտը։



Դռնապանն
Այդ ժամանակ
Յեկավ, ասաց·



— Կա
Յերկու սենյակ,
Ճաշարանով,
Լողարանով,
Ընդունարանով,
Այգիներով։
Միայն իմացեք՝
Աջ կողքին
Ապրում է
Չինացի,
Ձախ կողքին՝
Մալայացի,
Վերևում՝
Զուլուս,
Ներքևում՝
Հնդիկ։



Քնաթաթախ
Ծափ տվավ
Ու գոչեց
Անգլերեն
Միլիոները·
— Ո—կե՛յ,
Տվեք իսկույն
Համարների
Բանալիները։

Ցեվ չտապով
Առնելով
Թևի տակ
Աղջիկը,
Կապիկը,
Սլացավ
Թռչկոտալով
Դեպի
Համարները,
Միստր
Տվիստրը,
Նախկին
Մինիստրը,
Միստր
Տվիստր
Միլլիոները:





382
арт.
1-287а

С· МАРШАК

# МИСТЕР ТВИСТЕР

Гиз ССР Армении, Эривань



7



7.
А. 1935г.
Акт № 143
Вкладн л.

ԳԻՆ 75 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0395188

4167
H 1-287a